

Նուան իւրոյ: 15 Եւ արդ կամիք փոխանակ Քրիստոսի արարչին ձերոյ՝ ծառայել ձեզ անաստուածն մոզութեան անաւրինացն եւ խոցուն պաշտաւնեիցն, ի թողուլ նախ զվարիչն մեր եւ զնորուն պատուիրանս՝ զոր պատուիրեաց ձեզ, միամիտ կալ առ տեարսն մարմնաւորս՝ զորս Նորայն արարեալ է. գուցէ բարկացեալ Տէր Աստուած ձեր, եւ խլիցէ զձեզ արմատաքի, եւ մատնեսցէ զձեզ հեթանոսացն ի չար ծառայութիւն¹ ստրկութեանն մինչեւ յաւիտեան, եւ ոչ երբէք բարձցի լուծն ծառայութեան ի ձեւջ: 16 Եւ բողոքէք դուք առ Տէր, եւ նա ոչ լիցէ ձեզ. վասն զի անձամբ անկանիք դուք ի ծառայութիւն հեթանոս տերանց եւ անաստուած անզետ մարդկան, ի ձեռս հեթանոս արանց տերանց խստասրտաց². Եւ բազում չարի դիպեալ ելանիցէ առաջի ձեր, եւ ոչ կարիցէք ճողոպրել յայնմանէ:

17 Իսկ նոքա, որ միանգամ էին ի մի վայր ժողովեալ, զաղաղակ հարկաւնէին. քարոզ կարդացեալ՝ միմեանց ձայն առնէին, շփոթէին ամբոխէին, եւ ասէին. Հա՛պա գնասցուք, ասեն, սփռեցարուք յիւրաքանչիւր տեղիս, զի այդմ բանից մեք ինչ ոչ կամիմք լսել: Սփռեցան յիւրաքանչիւր տունս իւրեանց:

ԳԼՈՒԽ ԾԲ.

1 Յաղագս Շապիոյ արքայի, թէ զհա՛րդ յայնմ ժամանակի լռեցոյց զպատերազմ տալ ընդ Արշակայ Յայոց թագաւորին, եւ մեղմեխանաւք առ ինքն կոչէր ի հաշտութիւն:

2 Ապա Շապուհ արքայ Պարսից մեծաւ աղաչանաւք եւ պատարագաւք եւ հրովարտակաւք եւ սիրով զԱրշակ առ ինքն կոչէր, զի յայնմ հետէ արասցեն ի մեջ իւրեանց սեր եւ խաղաղութիւն եւ բարեկամութիւն մեծ: 3 Իսկ Արշակ արքայ թեպէտ պատերազմ կամէր տալ, այլ ոչ կամէին յանձն առնուլ այսմիկ ամենայն զաւրթն աշխարհին Յայոց: 4 Ապա թէ կամաւ կամաւ՝ թէ ոչ կամաւ, սակայն եղ սիրտ խոնարհութեամբ հրովարտակս³ առ Շապուհ արքայ Պարսից, որպէս վայելէ ծառայի առ տեր իւր, տալ: 5 Եւ առաքէր յիւրմէ նմա պատարագս հաշտութեան:

1 *Օրինակ մի՝ չարաչար*

2 *Օրինակ մի՝ ի ծառայութիւն հեթանոսաց եւ խստասիրտ տերանց. եւ բազում չարի*

3 *Օրինակ մի յաւելու՝ առաքել*